

ՄԱԹԵՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՇԱՐՈՒ «ԱՅՐՎՈՂ ԱՅԳԵՍՏԱՆՆԵՐ» ՎԵՊԻ ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՃԵՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ*

Ասում են՝ 1967-ին այրել են Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ» վեպը՝ ալը, և մոխիրն ուղարկել հեղինակին. ո՛վ զարմանք, հայ մարդը գիրք է այրել ժողովինչդեռ մենք սովորեցնում էին, թե գիրք այրում էին միայն մոնղոլ-թաթարներն ու մի քանի թուրք-սելջուկները, թե գիրք այրելը քաղաքակրթության ու մշակութային անցքմայալի բացակայության չափանիշ է: Իսկ ի՞նչն էր դրդել հայ մարդուն, որ մշակութային թային հարուստ կենսագրություն ուներ անցյալում և ներկայում, այդպիսի բարդագրարության դիմելու:

Գ. Մահարին երկար տարիներ ծեռնարկել էր այս վեպը գրելը, բայց աքսորողուկրկնակի աքսորը, հնարավորություն չստացին այն ավարտելու: Եվ միայն 1966-թթ. ին կարողացավ լույս աշխարհ բերել այն: Վեպը կարդացին գրողներ ու գրականյանագետներ, շարքային ընթերցողներ: Ու պայթեց մի մեծ աղմուկ: Կարկտի պետմագրողի գլխին թափվեցին մեղադրանքներ, նրան հասցեագրվեցին մեղքեր, ու ոգրոնք լրջորեն վարկաբեկում էին տաղանդավոր գրողին: Այս ամենը գրգռեց հայասարակ հայ մարդուն՝ ստիպելով այրել գիրքը. իբր այնտեղ մեր ազգային նկատմրազիրը աղարտող շատ բան կար:

Կարդալով վեպի մասին գրված հոդվածներ, Մահարու ստեղծագործությունընը ուսումնասիրողների գրքերը (Ս. Բողոսյան, Կ. Աղաբեկյան, Ս. Աղաբաբյան) մալհամոզվեցի, որ բացառությամբ Ս. Բողոսյանի և Ս. Աղաբաբյանի, որոնք, այնուամնամենայնիվ, լուծում պահանջող հարցերը շրջանցում են, մյուս քննադատները վեպին վերագրում են քաղաքական ուղղվածություն և այդ հայեցակետից քննեմնելով՝ մերժում են նրա գաղափարաբանությունը (խոսքն, իհարկե, վերաբերում է նալվեպի I տարբերակին):

Վեպի երկու տարբերակների բառացի համեմատությունը և անհրաժեշտսծե

*Այս հոդվածը գրվել է Գ. Մահարու ծննդյան 100-ամյակի առթիվ և ընթերցվել է Գ. Մահարուրու ծննդյան 100-ամյակին նվիրված գիտական նստաշրջանում: Հոդվածը համեմատալ տպագրության, երբ լույս տեսավ Մահարու «Այրվող այգեստաններ» վեպի երրորդ գիտաստական հրատարակությունը՝ բնագրաքննական ակնարկներով և ծանոթագրություններով: Ծանոթանալով նշված հրատարակությանը՝ հաշվի ենք առել նաև այս հրատարակության ալմեջ եղած համեմատությունները, ծանոթագրությունները և քննական մեկնությունները:

գրականության ուսումնասիրությունը ստիպեցին գրիչ վերցնել: Լուծում պահանջող մի քանի կարևորագույն խնդիրներ ծագեցին. նախ՝ Մահարին ի՞նչ գաղափարագեղագիտական նպատակներով էր գրում վեպը, և ի՞նչ տեղ ունի նրանում պատմական ճշմարտությունը. ապա՝ վեպի երկու տարբերակները ինչո՞վ են տարբեր և ո՞րն է նրանցից գեղարվեստական ամբողջություն ներկայացնում:

20-րդ դարի հայ մեծավաստակ գրականագետներից մեկը՝ Ս. Աղաբաբյանը, գրում էր. «Վեպի քննություններում տեղ գտան նաև անձնական կրքերին հենվող տպավորություններ» (ամենասարսափելին՝ իբրև թե թուրքերի կատարած ոճիրը... Մահարին վերագրում է զոհերին), մակերեսային, ոչ գրական հայացքներ («Մահարին աղավաղել է Վանի կենցաղը», «Մահարին սխալ է ներկայացրել այսինչ կամ այնինչ փաստը»)¹: Գրականագետն իրավացիորեն վեպը համարում է հոգեբանական-կենցաղային՝ Վանի պատմաքաղաքական իրադարձությունների համադրությամբ, այնինչ քննադատությունը պնդում էր, որ Մահարին «փորձել է քաղաքական վեպ գրել, բայց պատկերացում չունի ժամանակաշրջանի քաղաքական երևույթների մասին, այդ պատճառով էլ առաջին պլան է մղել կենցաղը՝ տապալկելով իր մտահղացումների մեջ գլխավոր խնդրում»²: Իր վեպի «Վերջաբան՝ որպես նախաբան» հատվածում Գուրգեն Մահարին ընդգծում է վեպը գրելու շարժառիթները. Չարենցի «Երկիր Նաիրին» և Բակունցի «Կյորեսը» համարելով գրական վիթխարի նվաճումներ՝ Մահարին «չգիտակցված խանդով» 30-ական թվականներին սկսում է գրել «Գուրգեն խանի տոհմը» վեպի առաջին գլուխները՝ շարունակելով Չարենցյան ավանդույթը: Իր վեպի գաղափարագեղագիտական նպատակը նա շարադրում է հետևյալ կերպ. «Եվ ինչո՞ւ, ասացե՛ք խնդրեմ. ինչո՞ւ դարերում պիտի ապրի կարսեցի մի մազութի Չամո, գորիսեցի մի Չաստ Ներսես բեյ, իսկ մյուս կողմից՝ անհուշ ու անհիշատակ՝ պիտի կորչի, ասենք, մի Օհանես աղա Մուրադխանյան: Չէր կարող չմարմնավորվել, չէր կարող, չէ, չծնվել Օհանես աղան. նա ծնվեց երեսնական թվականների առաջին կեսերին և իր լրման հասակ շուրջ երեսուն տարի հետո»³: Մահարին հստակ ձևակերպել է իր վեպի գրության նպատակը. այն է՝ պահպանել Վանն ու վանեցուն, «ընթերցողին դարձնել «վանեցի», ուր էլ որ նա ծնված լիներ, այնպես որ նա ոչ միայն տեսներ Վանը, այլև զգար այնպես, ինչպես ես եմ զգում Կարսն ու Գորիսը» (I, էջ 4): Անտեսելով առաջաբանում Մահարու գրածը վեպի ծննդյան գաղափարական շարժառիթների մասին՝ քննադատությունը պնդում էր, որ վեպն ունի քաղաքական ուղղվածություն և խեղաթյուրված են ժամանակաշրջանի պատմական իրողությունները. «Ամենից առաջ Մահարին խեղաթյուրված ձևով է ներկայացրել Արևմտյան Հայաստանի վիճակն ու ազգային-ազատագրական պայքարի շարժառիթները: Այդ պայքարը վեպում պատկերված է ոչ թե իբրև թուրքական բռնակալության դեմ անզոր ճնշման և հալածանքների դեմ ուղղված մի շարժում, այլ որպես Կովկասից ժամանած «եկվոր գործիչների» իրաիրած արհեստական և անտեղի մի բան»⁴: Իշխող մտայնությունը մեկն է. Մահարու վեպը պատմականությունից զուրկ է, խեղաթյուրված է Արևմտյան Հայաստանի դարասկզբի պատմաքաղաքական կացությունը, կեղծված են կու-

սակցական գործիչների դիմանկարները և գործունեությունը: Այդպե՞ս էր արդյոք: Ոչ միայն Վասպուրականում ու Ռշտունիքը, այլև ամբողջ Արևմտյան Հայաստանը ապրում էր մահվան սպառնալիքի, անապահովության, թալանի, բռնությունների պայմաններում: Մահարին ծնվել և 12 տարի ապրել էր այդ իրականության մեջ և հիմնալի գիտեր արևմտահայի իրական վիճակը, և վեպում էլ ծիգ չի արվում գունագարդելու այդ իրականությունը: Դոկտոր Աշերի օրագիրը և՛ վագույնս ներկայացնում է թուրքական կառավարության քաղաքականությունը հայերի նկատմամբ: Այն հարցին, թե բժիշկն արդյոք չի ուզում հաստատվել Վանում, նա պատասխանում է. «Վանում հաստատվել չի՞ կարելի, ինչպես չի կարելի հաստատվել Վեգուվի վրա» (I, էջ 488): Մահարին օտարի հայացքով ներկայացնում է Վանի ողբերգության ակունքը. Ջևդեթը (այսինքն թուրքը) չի կարող յերել հային, որովհետև նա չի մոռանում իր ազգությունն ու հավատը, որ նորագույն, հնագույն ազգեր չկան, կա թուրքի պետական շահը, և այն պահանջում է մինչև ռուսահայերի գալը հայերից մաքրել Տաճկաստանը: Պատահական չի համարում Դոկտոր Աշերը Ջևդեթին Վանի կուսակալ նշանակելը. չէ՞ որ նա հայերին «պայտել է և հրամայել, որ չորեքբաթ վազեն» (I, էջ):

Իրականությունն այն է, որ դրախտավայր համարվող Վանում գործերը տնօրինում են ոչ թե հրեշտակները, այլ սատանաները. «Այս սատանաները կոչվում են Վալի, կայմական, Փոլիս Մյուղուրի, ասկյար և նման բաներ: Հպատակների գործը չարքաշ և համառ աշխատանքով շինելն է, կառուցելը, տիրապետելի գործը՝ քանդելն ու ավերելը» (I, էջ 487):

Մահարին խորհրդանշական ձևով պատկերում է վանեցու վիճակը թուրքի իշխանության ներքո՝ ստեղծելով սեփական պոչով խեղդված Վանա տառեխի պատկերը: Վանեցին գիտեր, որ ապրում է չհանգչող հրաբխի վրա, որ ոչնչի ապահովություն չունի թուրքական բռնապետության մեջ. երբ Վանի շուկայում կրակոցներ են լսվում, արհեստավորներն ու վաճառականները արագ փակում են իրենց աշխատանոցները՝ պատճառաբանելով, թե «Էսօրվա խեռն ու բարաքյաթ չեն ուզեր» (I, էջ 22): Մահարին իրավացիորեն շեշտում է, որ թուրքի լծի տակ ժողովուրդն առանց այն էլ տառապում է և կարիք չկա նրա համար նոր, ավելի բարդ քաղաքական կացություն ստեղծելու: Քննադատությանը զայրացրել էր Մահարու հետևյալ միտքը. «Իրենց գլուխն ուտի իրենց հեղափոխությունը, ժողովողին ապրել է հարկավոր, սև օրով, սպիտակ օրով, բայց թող ապրի: Թող ապրի ջանքն, թող ապրի, թող դժվար ապրի, բայց ապրի» (I, էջ 236): Այսօր ազգովին ամեն ինչ կտայինք, միայն թե չկորցնեինք մեր հայրենիքը, իրոք, թող դժվար ապրեր հայը իր հողի վրա, բայց չմոթվեր ու անհայրենիք սփռվեր աշխարհի ծագերում: «Իրենց գլուխն ուտի իրենց հեղափոխությունը» միտքը ամեն օր կարող ենք լսել հասարակ հայ մարդու շուրթերից. չէ՞ որ ոչ հեռու անցյալում նույնպիսի մի հեղափոխություն հիմնավորապես ավերեց, հայաթափեց ու ազգային հարստությունից զրկեց մեզ: Ժողովուրդն ու նրա խոսափող մեծ գրողն իրավացի են. ազգը պիտի իր հողի վրա ապրի, ազգն իր հողի վրա է գորավոր:

Մեր ժոմանտիկ ժողովուրդն ու նրա կուսակցությունները մեծ հույսեր կապե-

ցին երիտթուրքերի՝ իշխանության գալու հետ։ Ապահովության, ազգային իդեալների իրագործման երաշխիքներ տեսան նրանց խոստումներում և ծրագրերում։ Մահարին ռեալիստորեն է մեկնաբանում երիտթուրքերի գործունեությունը՝ ստեղծելով երիտասարդ, ուսյալ, ազատամիտ թուրքի կերպար, որն արտաքին ծների մեջ մշակված է, խոսում է ֆրանսերեն, իշխողի և հպատակի պարտականությունների և իրավունքների արդար բաշխումն է ճիշտ համարում։ Նա գտնում է, որ երրորդ ուժի, այսինքն՝ հայ հեղափոխականների միջամտությունը վնասակար է. համաստրի արշավանքը, Օթոմանյան բանկի գրավումը, առհասարակ տեռորը փչացնում են հայ-թուրքական հարաբերությունը։ Դեղինակն իր հերոսի միջոցով հակադրվում է այդ տեսակետին՝ շեշտելով, որ ազգային ազատագրական պայքարը հետևանք է թուրքի ամօրենությունների և բռնության։ Մահարին իրատեսական հայացքով է ներկայացնում թե՛ թուրքական կառավարության քաղաքականությունը, թե՛ վաչկատուն թուրքի էությունը. «Բերկրիում, - խոսեց Միհրանը, - մի թուրք՝ խտրիկ անունով, մորթել է մի քանի հայի, արյունը հավաքել է տաշտում և լողացել, լողացել արյունով... Ե՛հ, ի՞նչ ասեմ, բե՛յ, երգեր շատ գիտեմ, ծայն չունեն...» (I, էջ 259)։

Լոգանքի սիամանթոյական այս պատկերը մի՞թե վկայությունը չէ թուրքի լծի տակ հեծող հայի իրական վիճակի։ Մինչ ազատամիտ թուրքը վկայում է, թե արյուն թափողն հանգիստ ապրել չի կարող, նրա թեթևաբարո կնոջ շուրթերով հնչում է դաժան ճշմարտությունը. թող Միհրան էֆենդին հավատափոխ լինի. «Կոտորածների ժամանակ նրան ոչ ոք չսպանի, քի՜չ բան է...» (I, էջ 268)։

Եզրահանգումը մեկն է. կոտորելու են հայերին՝ անկախ ամեն ինչից, քանի որ առերևույթ ազատամիտ այս երիտթուրքերն էլ համիդյան հայադաշն քաղաքականության հետևորդներ են։

Մահարին վեպի II տարբերակում ամբողջացրել է երիտթուրքի կերպարը՝ առավել լիարժեք և ավարտուն դարձնելով այն։ Իրականը հայելուց նենգ, քամահրական, ատելությամբ լեցուն հայացքով նայող Մյուդուրն է, որը վստահեցնում է իր գերադասներին. «Ես եկա այն հաստատ համոզման, որ անգամ եթե երեք հայ կենդանի մնա մեր հողի վրա, հայկական հարցը կմնա ի գործ...» (II, էջ 516)։ Թուրքի կերպարն իր ճշմարիտ կերպն է տառնում, բացահայտվում են նրա էության բոլոր որակները. «Կռվել չի սիրում թուրքը, թուրքը ի՞նչ, կռիվն ի՞նչ, սպանել, այո՛, կողոպտել, խնդրեմ, միշտ պատրաստ, իսկ կռվե՞լ...» (II, էջ 517)։ Վեպի վերջում Մահարին սահմռկելի ու դաժան պատկերներ է ներկայացնում, Վայոց ձորում կենդանի շունչ չէր մնացել, թուրքը օջախում երեխա էր այրել. հայ կանանց լլկել ու սպանել էր, իսկ հայ մարդը՝ Մամվելը, Տիգրան Մեծի ժամանակի Դայաստանի քարտեզն էր գծում, երազում ծովից ծով Դայաստան։ Թուրքը կացնահարում է նրա երազը՝ արյունով ներկելով պատմական Դայաստանի քարտեզը։ Այս պատկերը կա 2 տարբերակներում, այսինքն՝ Մահարին հայ-թուրքական հարաբերությունները ներկայացրել է ինչպես որ է՝ հաշվի առնելով պատմական տվյալ ժամանակահատվածի բոլոր նրբությունները. «Սահմանադրություն խաղացին, տերտերն ու մուլան համբուրվեցին, հայն ու թուրքը հավի-

տեմական եղբայրություն ուխտեցին, հայ երեխաները թուրքերեն երգեր երգեցին... Գետինն անցնեք դուք էլ, ձեր վաթա՛նն էլ: Սուտ, բոլորը սուտ: Էլի գնե՛ք, էլի գաղտնի զինապահեստներ, պահարաններ... Կիլիկյան ջարդեր...

Էլմ են Կիկոն,

Էլմ են Սըրտոն...

Ոչխարը ոչխար մնաց, գայլը՝ գայլ» (I, էջ 198):

Մահարին դեմ էր մեր ազգային խառնվածքին բնորոշ ծայրահեղ ռոմանտիզմին, չհիմնավորված կեցցեներին՝ գտնելով, որ պետք է ժամանակ շահել. կյանքի կոչել դիվանագիտական ստրատեգիա. չէ՞ որ յուրաքանչյուր վրիպում ազգի ճակատագիր էր արժենալու: Վեպի II տարբերակում, ի թիվս այլ արժեքավոր էջերի, Մահարին ընդգրկել է 25-րդ ասքը՝ նվիրված Փանոս Թերլեմեզյանի, Կոմիտասի և խրիմյան Դայրիկի դիմանկարներին: Խրիմյանի շուրթերով հնչում են մեր սխալները դատապարտող մտքերը. «Ես ոչ ծիուն նստած Դոմ Քիշուտ եմ, ոչ ալ ավանակին նստած Դիսուս Քրիստոս: Գերության մեջ ընկած որևէ ժողովրդի համար ստրկամտությունը հոգևոր և մարմնավոր մահ է, պետք է արթուն պահել ժողովրդի ըմբոստության ոգին, բայց չպետք է ժողովրդի գլխու վրա հեղափոխական սափրիչություն սորվել: Խոսք չունիմ, արևելահայ գործիչների մեջ ազնիվ և անձնագոհ գործիչներ կան, ազնիվ մտադրություններով ճամբա ելած են և անոցք բռնած ճամբան ճիշտ է, բայց այդ ճիշտ ճամբան չեն կրցած խուսափել ճակատագրական սխալների և գայթակղությունների» (II, էջ 596):

Պատմաբան Մ. Ներսիսյանը վկայում է, որ մինչև 1870-ականների վերջերը, մասնավորապես 1878թ. Բեռլինի կոնգրեսից հետո Մ. Խրիմյանը եկավ այն համոզման, որ Արևմտյան Դայաստանի ազատագրության հարցը չի լուծվի առանց զինված պայքարի և ժողովրդական ապստամբության. «Բայց անցան տարիներ: Դայական և ընդհանրապես Արևելյան հարցի շուրջ ծավալված դիվանագիտական հարաբերություններում տեղի ունեցան զգալի տեղաշարժեր: 1880-ական թթ. կեսերից սկսած Մ. Խրիմյանը ավելի շատ հակվեց դեպի լիբերալ հայացքները, սկսեց ավելի հաճախ խոսել զգուշության և խոհեմության մասին»⁵: Իր ժողովրդի պատմության ընթացքն ու դեպքերի զարգացման տրամաբանությունը ստիպել էին Մ. Խրիմյանին փոփոխել հայացքները: Շատերը մեծ եղեռնից հետո պիտի ջանային պատասխանել հարցերի հարցին. ինչո՞ւ այդպես եղավ: Ե. Չառենցը, Շ. Շահնուրը, Դ. Օշականը, Լևոն-Ջավեն Սյուրմեյանը, Շ. Նաթալին Կիտի փորձեին մեր ներսում գտնել թշնամուն, որը կործանեց մեզ: Շահնուրը գրում էր. «Ամվերջ հայիոյեցիք թուրքին: Կնմանեիք մանուկի մը, որ քնացող գազանի մը վրա խճաքարեր կնետե՛ք բարկացած ու դժգոհ ըլլալուն համար: Բայց նախքան այդ ինքզինքը չէ պատսպարած վանդակավորին ետև: Նախքան այդ չէ սորված գազանազգայությունը. հապա եթե գազանը արթնմար: Արթնցավ»⁶: Գազանին չարթնացնելուն էր ուղղված Մահարու «Դգեզի բունի հետ կխաղաք, դգեզի բունի» արտահայտությունը: Այն լուրջ քննադատության արժանացավ. իբր Մահարին քարոզում էր ստրկամտության և հնազանդության, արժեզրկում էր կուսակցությունների դերը ազգային ազատագրական շարժումները կազմակեր-

պելու գործում: «Դձեզի բունի» հետ խաղալու պատկերը II տարբերակում չկա*, բայց տեսակետը մնացել է նույնը, այն է՝ չի կարելի վտանգի հետ խաղ անել, արագացնել խայթվելը: Նրան հակադրվում է Արաբոն 96-ի ազատագրական պայքարի մարտիկը. նրա տեսակետն այլ է. «Դու կասես դձեզի բուն, է, որ դձեզի բունի հետ չխաղաս, դձեզներին հանգիստ թողնես, դձեզներ շերամի ո՞րո՞ղ կդառնան, արքշուն կշինեն, թռթռնեկի՞ կփոխվին... չէ՞... դձեզների բան - գործ կծելն ի... Կասես, Իշխան - Արամ, է, երթանք քեզ հետ Կիլիկիա, Օհանես աղա, Կիլիկիայի մեջ Իշխան - Արամ կար, որ բռնեցին, մեր-մանուկ սրի քաշեցին»: I տարբերակում հակադրության այս եզրը չկա, Մահարին իրավացիորեն ընդլայնել է հայացքը երևույթի հանդեպ՝ հաշվի առնելով նրա բոլոր շերտերը: Թուրքի կենսաբանական, էթնիկ տեսակին վերագրվում է անվերապահորեն, ցանկացած պարագայում ոչնչացնելու բնույթը: Բայց մի՞թե այս բնորոշումն իսկ տագնապի ազդանշան չէ, որ պետք է հմնավորինս շրջանցել «դձեզի բունը»:

Յողվածագիր Մ. Մխիթարյանը գրում է. «Գիտակցաբար մերժելով պատմական կոնկրետ պայմաններում ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման հսկայական նշանակությունը՝ Մահարին, հավատարիմ իր մշակված սկզբունքներին, ծաղրում է այդ գործը»⁷: Ի՞նչն էր ծաղրում Մահարին. Վանի ինքնապաշտպանությունը, ազգային-ազատագրական պայքարն ընդհանրապես, թե՞ ԶԳԴ գործունեությունը վանում:

Պետք է համաձայնենք, որ վեպի I տարբերակում «օտարամուտ բախտախնդիրների կամ «եկվորների» մասին մտքերը կոպիտ են և խիստ, II տարբերակում այդ որակումները չկան, բայց ԶԳԴ գործիչների գործունեությունն ու դիմանկարները (բացառությամբ Արամի) մնացել են նույնը: Այսինքն՝ իրաժարվելով խիստ արտահայտություններից՝ Մահարին պնդում է իր տեսակետը, այն, որ կույր տեռորը, մաքրումները, զենք կրելը զրգռում են թուրքին՝ ստիպելով արագացնել ոճիրը:

Քննադատներից և ոչ մեկը չի դիմել փաստերի՝ հիմնավորելու Մահարու սխալ վերաբերմունքը ԶԳԴ գործիչների նկատմամբ: Մի՞թե հեղինակը կարող էր այդպիսի հրեշավոր ոճիրներ վերագրել ԶԳԴ գործիչներին՝ առանց նվազագույն հիմքեր ունենալու:

Դաշնակցության Գերագույն Մարմնի Ռշտունիքի գավառի ներկայացուցիչը Իշխանն էր: Ռուբենը նրան համարում է փաստական կուսակալը «Վիլայեթի մեկ խոշոր մասին, Վրչիկների աշխարհին»⁸: Ռուբենի հետ երկխոսության ընթացքում Իշխանն իրեն ներկայացնում է «որպես հուսահատ ու մոլորված մեկը»՝ պատրաստ ինքնասպան լինելու, որովհետև նրա վեհ իդեալներն ու ձգտումները հող չէին գտնում. իրականությունն այլ էր. «Մի քանի ամիս առաջ կմտածեինք, որ երբ նպատակին հասնինք, հանգիստը մերն է, ազատությունը մերն է: Դուրս եկավ, որ այդ բո-

* «Դձեզի բունի» հետ կապված պատկերը Մահարին երկրորդ տարբերակում պահպանել է, բայց վեպի երկրորդ հրատարակության ժամանակ խմբագրակազմի կողմից դուրս է մեծվել վեպից: Գրական այս համցանքի արդյունքում «դձեզի բունի» գաղափարը վեպի երկրորդ տարբերակում պահպանվել է, իսկ զեղարվեստական պատկերը չկա:

լորը մերը չէ, այլ սրիկաներունը»⁹։ Խոսքը վերաբերում է իրենց շարքերում հայտնված պատահական անբարո տարրերին, որոնք վարկաբեկում էին շարժումը. «Մենք իսկ հիմնովին կայանդակինք և այլև կկորսցնենք մեր իդեալները ու կդառնանք անպետք»¹⁰։ Նա համզամանորեն ներկայացնում է կուսակցության վարած քաղաքականությունը Ռշտունյաց գավառում։ Սեռի հարցերում դաժան էր նրա վերաբերմունքը. նա մահապատժի է ենթարկում ուրիշի կնոջ հետ հանցավոր կապ ունեցած Արդալին, որի համար վաստակում է «ոճրագործ հրեշի» անուն։ Իսկ դիերցի Դավոյի դեպքը ներկայացնում է այսպես. Դավոն պղծել էր ընկերոջ բորոջ և պատժվելու վախից դիմել դավաճանության։ Իշխանը պնդում է, որ Դավոյին պետք էր սպանել, որ «դավաճանության չհասներ վախեն, ասով սպանման կլինեինք Դավոյին և ոչ թե դավաճան Դավոյին, մեր զենքերը կմնային մեր պահեստներում մեջ և ժողովուրդին համակամքն էլ կշահեինք... Այդ փողոցի բամբասանքները կուժ ու կուլայի մնան ջարդեցից Արամի գլխին...»¹¹։ Մահարին չէր աղավաղում փաստերը՝ փորձելով լուսապլասակից զրկել Արամին. ժողովուրդը դիերցի Դավոյի դավաճանությունը կապում էր Արամի անվան հետ։ Ընդ որում՝ Արամի կերպարը այս դիպվածի շնորհիվ դարձել է ավելի լիարյուն, հարուստ կերպար, քան Իշխանի, Կռամյանի կամ մյուս կուսակցական գործիչներինը։ ԳԳԴ գործիչները հաշվեհարդար էին տեսնում նրանց հետ, ում կասկածում էին դավաճանության մեջ, և այսօր դժվար է դատել. նրանք ճիշտ էին վարվում, թե՛ ոչ, արդյոք դա միակ ելքն էր ստեղծված վիճակից. չէ՞ որ հայը հային էր սպանում, և որքան էլ երևույթը դավաճանությանը հիմնավորված լիներ, արժանանալու էր ժողովրդի թշնամանքին։ Մահարին այս հայացքով էլ քննում է երևույթը։ «Այրվող այգեստաններում» վանեցիների զայրույթն առաջացրած և դաշնակցությունը վարկաբեկող հաջորդ դրվագը Աղթամարի թալանն է և կաթողիկոսական փոխանորդի սպանությունը։ Որքանով է փաստը հավաստի, և ի՞նչ բաժին ունի գեղարվեստական հորինվածքը։ Խոսքը տանք Իշխանին. «Վերջերս ալ մոր պատմություն են հնարել. «Իշխան ինքնագլուխ սպանած է Արսեն վարդապետը (կաթողիկոսական փոխանորդ) թալանի համար»։ Այս եղա՞վ։ Աղթամարի կռվեն հետո ողջ աշխարհը կպոռար. «Սատկեցնել այդ դավաճանը»։ Որոշում կար սպանելու, և զիս կմեղադրեին, որ ողջ կթողնեմ. երբ մահն աչքս առած՝ իրագործեցի, այժմ «մենք խապար չունինք»¹²։ Մահարին դեպքը ներկայացնում է դարձյալ ժողովրդական մեկնաբանությամբ, որ սպանությունը կողոպուտի նպատակով էր։ Այո՛, Մահարին չի պաշտպանում դաշնակցության՝ տեռորի միջոցով ազգային խնդիրներ լուծելը, որի ընթացքում թացն ու չորն իրար էին խառնվում, և անմեղն էր հաճախ անարդարացիորեն զոհ գնում (հիշենք Օհանես աղայի հետ կապված համապատասխան դիպվածը)։ Մեծագույն հերոսություն էր թուրքի քթի տակ ժողովուրդ զինելը, պետական մեքենային դեմ դուրս գալը։ Անուրամալի է ԳԳԴ-ի դերը ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման գործում, բայց կազմակերպական հարցերում դաշնակցական գործիչներն էլ լուրջ տարածայնություններ են ունեցել, ինչը կարող էր սխալների պատճառ դառնալ։ Իշխանը դեմ է Ռուբենի այն համոզմանը, թե Արամը ճիշտ է վարվում բոլորին վստահելով, ձեռքի տակ եղած բոլոր միջոցները գործին ծառայեցնելով. «Դեհ, մեկ անգամից ըստ, թե կուսակցություն ախտո է»¹³ (էջ 230)։

Ռուբենի «Հիշատակարանում» վկայություն կա նաև Մուշեղ Բալդոյանի դեպքի մասին: Մահարին գրում է, որ Արամի կողմից հաստատվել էր Մուշեղի դավաճանության փաստը, և անխուսափելի էր նրա մահը, թեև Կոճա Դավոն չի կատարում հրամանը և ազատ է արձակում Բալդոյանին: Ռուբենի այն հարցին, թե ինչպիսին են Վանի ընկերները, Իշխանը պատասխանում է. «Քու բարեկամներն են և այն ժամանակվա ընկերներն ո՞վ է մնացել, որ ըսեն... Քու Արտակ դարտակ դուրս եկավ, ինչ լավ եղավ, որ մեր մեջ չմտավ: Քու Բալդոյ, որ Կ.Կ-ի անդամ իսկ եղավ, վերջը ոստիկանների պաշտպանության տակ մեզմե ազատավ...»¹⁴: Փաստերի այդպիսի համապատասխանությունը չէր կարող հիմնվել միայն տասներկուամյա պատանու հիշողությունների վրա. Մահարին համագամորեն ուսումնասիրել է հարցի մասին ստեղծված գրականությունը: Փաստական ճշգրտությամբ են ներկայացված Իշխանի սպանությունը Հիրժում, Ջևղեթի կողմից Վառայանի կանչվելն ու բանտարկվելը, Արամին ուղարկված Վառայանի երկտողը:

Արամի կերպարը վեպի I տարբերակում առավելապես ներկայանում է բացասական որակներով, II տարբերակում Մահարին կերպարը զարգացրել է մարդկային թուլություններին զուգահեռելով ազգային-քաղաքական գործչի նկարագիրը: Մահարին Արամի մասին գրում էր. «...Նրան ժողովուրդը տվել էր Արամ փաշա կոչումը, և եթե չէին սիրում նրան, ապա վախենում էին, վախից՝ հարգում, վախից... սիրում» (I, 294): Արամի նմանօրինակ բնութագրման ենթ հանդիպում Արմենակ Եկարյանի հուշերում¹⁵: Իսկ Իշխանը վկայում է, որ Արամը կարևոր դեմք է Վանում. «Արամը Վանում հեղինակություն է, այդ իսկ պատճառով նրան «փաշա» են ասում, բայց իրենց հոգու մեջ կատեն այդ փաշային, կվախման»¹⁶: Գուրգեն Մահարին գեղարվեստորեն, իսկ ռաբակավար Արմենակ Եկարյանը և դաշնակցական Իշխանը փաստացի վկայում են միևնույն երևույթի մասին, այն է՝ Արամ փաշային Վանի ժողովուրդը չէր սիրում:

Արամ Մանուկյանի գործունեության մասին բավականին գրականություն է ստեղծվել և հեղինակների մեծ մասը (բացառությամբ Ա. Եկարյանի և Ա. Թերզիբաշյանի) նշում են, որ Արամ Մանուկյանը Վան-Վասպուրականի նահանգապետի պաշտոնում իրեն դրսևորել է քաղաքագետի և հայրենասեր գործչի լավագույն հատկանիշներով. «Կառավարությունը ձևավորելիս Արամը նկատի ունեցավ բոլոր գործունյա ուժերին՝ անկախ կուսակցական և ընկերային հանգամանքից, կովկասահայ կամ թուրքահայ լինելուց»¹⁷:

Մահարին իրադարձությունները ներկայացնում է պատմական ճշգրտությամբ. Վանի ազատության 70 օրերին Արամը դրսևորում է ղեկավարի անուրանալի ծիրը: Կառավարություն է ստեղծում բոլոր կուսակցություններից՝ փորձելով լուծել նահանգի առջև ծառացած ծանրագույն խնդիրները՝ ազգամիջյան, պարենային, ռազմական և այլն: Մահարուն հաջողվել է վեպի II տարբերակում խորացնել Վանի նահանգապետ Արամի հոգևոր տառապանքը՝ կապված իրենց գործունեության և դեպքերի զարգացման հետ: Գաղթի մախտոյ գիշերը Արամը վերլուծում է տասնյակ տարիների իրենց աշխատանքը, կրած զրկանքները, որի արդյունքում ընդամենը մի քանի տասնյակ օրերի ազատություն. «Մեծ ոգորումների,

մեծ գոհերի ու երազների չնչնագույն վարձատրություն» (II, էջ 681): Իր ժողովրդի դաժան ճակատագրի մասին խոհերը նրան տանում են իրենց սխալները հայտնաբերելու ճանապարհով. «Ո՛րն էր մեր սխալը»: Սխալականությունից մինչև անսխալականություն փիլիսոփայական դեգերումներից ծնվում է վերջնական բնորոշումը կուսակցության գործունեության. «Ո՛չ, ո՛չ, ճիշտ է եղել մեր բռնած ճանապարհը,- տազմապեց նա՝ ասես մեկին հակաճառելով, - ճիշտ է եղել մեր ճանապարհը. բարձր է ազնիվ նպատակներով մենք ընկանք ճանապարհ, բայց հնարավոր է, որ այդ ճիշտ ճանապարհին կամա կամ ակամա, գիտությամբ թե անգիտությամբ գործեցինք գուցե և ճակատագրական սխալներ: Գուցե ավելի նվազ լինե՞ր գոհերի թիվը, միևնույն է, բոլոր մեծ և փոքր գումարելիների գումարը անխուսափելիորեն այս պիտի լինե՞ր: Ո՛վ կարող էր տեսնել, նախատեսել այսպիսի վերջաբան» (II, էջ 686): Ձաթիուրելի է թվում նրան այսպիսի վերջաբանը: Փողոցներով հոսում էր մարդկանց հեղեղը, որոնք անվերադարձ լքում էին իրենց բնօրրանը, և նա ցանկանում է կասեցնել այդ ողբերգական երթը՝ գոչելով. «Վա՛նեցիմներ, ժողովուրդ, ո՛ր եք գնում, ե՛տ դարձե՛ք ձեր տները, նորից վաճե՛ք ձեր պապենական օջախները, բացե՛ք ձեր եկեղեցիներն ու դպրոցները, խանութներն ու արհեստանոցները... ուշ է, ...ուշ է... պատմության անիվը ետ չես դարձնի. Վա՛նը, Վասպուրականը, հողը, երկիրը ձեռքից գնում է...» (II, էջ 687):

Մահարին միազիծ արժեզրկման միտումով չէր գրում իր վեպը. ըստ էության վեպում առաջարկվում են մեր ժողովրդի անցած ճանապարհի բոլոր հարցադրումները, փորձ է արվում սրբափ հայացքով քննելու մեր սխալները և կարևորելու մեր ձեռքբերումները, բայց քանի որ վեպի գաղափարական և տրամաբանական ավարտը հայրենիքի կորուստն էր և դրանից ծնված ցավը, ապա արժևորելու քիչ բան կար:

Մ. Մխիթարյանը իր հոգվածում գրում էր. «Իր ոգևորության մեջ Մահարին սև երանգով է պատել հայկական Մեծ եղեռնի նախօրյակին հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացման եզակի հատվածներից մեկը՝ Վասպուրականը և նրա ժողովուրդին»¹⁸: Ծայրահեղ և դաժան որակում: Ինչպիսի՜ անպատասխանատվություն գրի և խոսքի հանդեպ: Ի՞նչն էր սևով պատել Մահարին՝ իրե՛ն, ի՞ր ծննդավայրը, վանեցո՞ւն: Նույնը պետք է ասեմք Չարենցի մասին. նա սև երանգով էր պատել Կարսը, իր համաքաղաքացիներին. չէ՞ որ կյանքը Վանում շատ ավելի հետաքրքիր ու հարուստ էր՝ ի տարբերություն Կարսի գորշ, միապաղաղ, անգույն կեցության: Մահարին պատկերում էր իրական Վանը՝ առօրյա հոգսերով, քաղաքական, կուսակցական, կենցաղային իրադարձություններով՝ փորձելով ընդգրկել հասարակական բոլոր խավերը՝ իրենց սոցիալական դիրքին հատուկ հոգեբանական նուրբ բնութագրումներով: Մինչդեռ Չարենցը Կարսն ու կարսեցուն ներկայացնում է նույն հայացքով՝ սպանիչ ծաղրի շղարշով պատելով թե՛ բոլոր սոցիալական խավերին, թե՛ դեպքերն ու երևույթները: Մահարին ու Չարենցը գաղափարական մի կետում միայն ունենին ընդհանրություն. երկուսն էլ իրաշալի ձևով մեր սխալներն էին ծաղկում, մեկը ժողովրդական առողջ հումորով, մյուսը ոչնչացնող ծաղրով խոսում էին նույն երևույթի մասին, որի իդեալները վեհ էին, սխալները՝ ճակատագրական: Չարենցը 20-ականներին ավելի դաժան կերպով «արժևորեց» ոչ հեռու անցյալի իրադարձություն-

ները, ՀՀ-ի գործունեության հանդեպ նրա վերաբերմունքը անվերապահորեն մերժողական էր: Մահարին իր գնահատականներում ավելի մեղմ էր ու չափավոր, բայց նրա ասածը չընդունվեց, որովհետև ժամանակը նպաստավոր չէր: Ազգային-ազատագրական պայքարի գնահատման բարձրագույն փուլում 1966-ին, լույս տեսած այս գիրքը չէր բավարարում հայրենասիրության փառավոր էջեր ակնակալող հայ ընթերցողին, ինչը ի վնաս Մահարու օգտագործվեց: Մահարին ոչ միայն չի ծաղրում Վանն ու վանեցուն, այլ գրչի ամբողջ զորությամբ փառաբանում է դրանք:

Վեպում շեշտվում է, որ Վանը դրախտավայր է՝ աստծո ստեղծած հրաշալիքներից մեկը: Օհանես աղայի և Գևորգի երկխոսությունը լավագույնս արժևորում է Վանն ու վանեցուն. շենշող հումորով տրված հարցը՝ «Բացի Վանի հալերից ուրիշ ո՞վ կար աշխարհի վրա», վանեցու, նրա ծագումնաբանության, պատմության ու էության առավելագույն գնահատականն է: Գևորգի գեղարվեստական էքսկուրսը հայոց պատմության էջերում բացահայտում է մեր անցած ուղու ողբերգական պատկերը. բեև վանեցին աստծո ստեղծած առաջին մարդն էր, բայց արհավիրքներով ու մաքառումներով լի էր նրա ընթացքը պատմության բառուղիներով: Փորձելով գտնել այս դրամատիկ երթի պատճառները՝ Օհանես աղան եզրակացնում է, որ պետք չէր հակադրվել աշխարհին, պետք էր լեզու գտնել հարևանների հետ, չեզոք ապրել:

Վանեցին հպարտ է վանեցի լինելով. «Է՛, վանեցին մարդ չէ՞» հարցին Օհանես աղան պատասխանում է. «Ո՛չ, վանեցին վանեցի է, մարդը ի՞նչ է վանեցու մոտ» (I, 553): Օհանես աղան փորձում է ճշգրտել հայրենիք հասկացողության սահմանները՝ գալով համարելու լուծումների. եթե կործանվի վանեցին, կկործանվի նաև Վանը, դրանով իսկ կլուծվի անլուծելի թվացող մի հարց. առաջ Վա՛նն է եղել, թե՞ վանեցին: Իր հողի վրա վանեցուն լինելիությամբ է նա արժևորում Վասպուրականի պատմական հուշարձանները՝ Վարազա վանքը, Սուրբ խաչ եկեղեցին, Սենեքերիմ արքայի և մյուսների հիշատակները:

Վեպում Մահարին բազմաթիվ էջեր է նվիրել իր դրախտանման բնօրրանի բնության նկարագրությանը. դրանք բանաստեղծ Մահարու գրչի արտահայտությունն են՝ նրա աշխարհընկալման քնարական, հուզական կերպը հաստատող. «Այգինե՛ր, այգինե՛ր, ագինե՛ր, խիտ, կանաչ, զարմանալի կանաչ այգիներ՝ բարձրաբերձ բարդիներով և բերքառատ մրգաստաններով, ուր հասնում է խնկանման վիթխարի մալաչեկ տամձը, մալաչեկն ու մեզրակը, ուր բուրումն է դալալի խնձորը, լեցվում են խաղողի ողկույզներն առաջին մայրության առատ ու լեցուն կոթքերի պես, սեթևեթ ու մատչելի հմայում է ծիրանը, ծանրանում է սերկկիլը, երգում է դամոնը, ոլորվում են այգիներում արահետները, խնկում են ծաղիկները, ու այս ամենի վրա շողշողում է վիթխարի մի արև, թավալվում է ինքն իր վրա, մուլեզնում է, թափում իր ջերմ գրգիռն ու արևային տարփանքը, և ապրում է աշխարհը, ապրում է Վանը» (I, էջ 50): Շարունակվում են պատկերները՝ արձակ բանաստեղծություն հիշեցնող, որոնք բնության ամենանուրբ տարրերից հյուսում են Վանի բնությունը, ու այգիների մեջ կորած այս քաղաքի բնափշիների՝ ոսկերիչների, ջուլիակների, ուսուցիչների, խանութպանների, հասա-

րակ ու նշանավոր բոլոր մարդկանց՝ Փանոս Թերլեմեզյանի, Աղասի Խանջյանի, Աճեմյանների, Խրիմյանի և այլոց օժտվածությունն ու աստվածապարզ և շնորհները բացատրելի են դառնում նույն այդ առատ, շքեղ, ոգի ու միտք ծնող բնությանը: Եթե պահպանված չլիներ Վան քաղաքը Ալեքստանով ու Քաղաքամեջով, նկարագրող վկայությունները, ապա Մահարու նկարագրությամբ կարելի էր վերստեղծել քաղաքի մանրատիպարը: Վանեցին սիրում է իր հայրենիքը և բարձրագույն գիտակցությամբ է դուրս գալիս այն պաշտպանելու:

Վեպի II տարբերակում Մահարին զգալիորեն հարստացրել է ինքնապաշտպանության նկարագիրը, նոր հերոսներ և հերոսական դեպքեր ընդգրկել: Օրհասական այդ ժամին Վանը ուղքի է կանգնում առանց տատանման, անհողողող կամքով ու երկիրը փրկելու վերջնական որոշմամբ, քանի որ. «Անկոտրում է վանեցու կամքը, վանեցու հան հա է, չեն՝ չէ, վանեցին Վանի բերդի պարիսպներին նման համառ է ու դիմացկուն, իր ծովի չափ համբերություն ունի» (I, էջ 532):

Հանգամանորեն համեմատելով Վանի հերոսամարտի մասին պատմական վավերագրերը, պատմաբանների տեսակետները՝ հանդգնեցի, որ Մահարին փորձել է հնարավորինս հարազատ մնալ իրական հերոսամարտին՝ սկսած զինվորական մարմնի կազմից, Հովհաննես Կուլօղլյանի ճառից մինչև զինվորական ֆանֆառ, պատանի վանեցիների հերոսական մասնակցությունը, մարտական դիրքերի նկարագրությունը և ռազմական նշանակության մարմինների կազմն ու նկարագրությունը¹⁹:

Մահարին գրում է. «Բացվել էր մի դարաշրջան, երբ չկար, զոյություն չունեիր ո՛չ դաշնակ, ո՛չ հնչակ, ո՛չ արմենական, կար միայն կռվող, մարտնչող վանեցին» (I, 552): Պատմական և գեղարվեստական ճշմարտությունները նույնացել են. իրավիճակի այսպիսի ձևակերպումը թե՛ բառապաշարի, թե՛ գաղափարաբանության դիտանկյունից հարազատ է պատմաբան Աշ. Հարությունյանի ձևակերպմանը. «Երբ արդեն առկա էր մերկապարանոց փաստը, Վանում գործող տարբեր քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների ներկայացուցչական ժողովը որոշում է ընդունում մի կողմ դնել ներքին տարածայնությունները և միասնական ճակատով հանդես գալ թշնամու դեմ»²⁰: Վեպը անհարկի քաղաքականացնելու կարիք չկար. 1915 թվականի ապրիլի 6-ին վանեցիները միասնականորեն դուրս են գալիս պաշտպանելու իրենց քաղաքը: Վանի ինքնապաշտպանության կազմակերպման գործում մեծ դեր է կատարել վանեցի ռամկավար Արմենակ Եկարյանը, որը հաստատական և ուժեղ անձնավորություն էր: Իրավացի էր Գ. Մահարին. Վանը պաշտպանում էր վանեցին, նյութական ու ֆիզիկական կորուստներ տալիս էր Վանը. «Վանը՝ վանեցիներին» ձևակերպումը այս առումով ճշմարիտ էր և մեր ժողովրդի հոգեբանությանը խիստ բնորոշ:

Քննադատությունը քաղաքական-կուսակցական ուղղվածություն վերագրելով վեպին գտնում էր, որ վեպում չկա ոչ մի կայացած հերոս, Մահարին նկարագրել է Վանի առևտրականներին, որոնք զօրած, մանրախմբի, սմանկ հոգով, արժանապատվությունից զուրկ արարածներ են, անմաքուր կրքերի, դաժան չարագործությունների, ստոր հակումների կրողներ: Մահարու վեպը բազմաշերտ ստեղծագործություն է՝ կյանքի բոլոր բնագավառները, հասարակական բոլոր խավերը ներկա-

յացնող: Նպատակ ունենալով հավերժացնել Վան քաղաքը՝ հեղինակը իր գրքի հերոս է դարձրել Վանի գրեթե բոլոր բնակիչներին: Վեպի կենտրոնական հերոսը Օհանես աղան է, որի շուրջ սարդոստայնի պես հյուսվում են վեպի թե՛ վեցադային-առօրյա, թե՛ քաղաքական-կուսակցական իրադարձությունները: Վեպի առաջաբանում Մահարին նշում է, որ ինքը նպատակ ունի հավերժացնելու Օհանես Մուրադ-խանյանին և նրա գործերը: Օհանեսը հարուստ վաճառական է՝ տոհմիկ վանեցու տիպ, որի կենցաղը, գործերը, հարաբերություններն աշխարհի հետ ստեղծում են լիարյուն կյանքով ապրող առողջ մարդու կերպար: Օհանես աղան հասարակ վանեցի է, վանեցու հավաքական տիպ, որը խորհում է մեր սխալների մասին, արժևորում մեր կեցության կենսական շերտերը: Անսպառ հունորի տեր, ընտանիքն ու հայրենիքը սիրող այս գործունյա վանեցին ոչ միայն ոսկի է հաշվում ու հարստություն դիտում, այլև զինվոր ու հաց է տալիս Վանի ինքնապաշտպանությանը: չմոռանա՞նք, որ մաս նրա և նրա մամնների հարստության շնորհիվ Վանը դիմացավ ու սովի չմատնեց: Վանի ինքնապաշտպանության օրերին Օհանեսը տանջագին որոնումների ու խոհերի մեջ էր: Փորձում էր գտնել մեր կորուստների ակունքները: «Մեր տունը այն ատեն քանդվեց, որ Հայաստանը մայր եղավ և ոչ թե հայր, այս ավազակներու երկրի մեջ մա՞յր կոչվեա՞նա» (I, 512): Փամոս աղայի այն մտքին, թե առանց ռուսի օգնության չեն դիմանա, Օհանես աղան պատասխանում է. «Քեռու քիթ զաթի մեզ համար կքորվի» (I, 556). իրավացի էր իմաստուն վանեցին. վանեցին արյունով պաշտպանեց Վանը, ցարական Ռուսաստանն այն անարյուն մվիրեց թուրքին: Պատմական ծշմարտությունն այն էր, որ ռուսը միայն իր պետական շահն էր հետապնդում:

Հոգվածագիր Մ. Մխիթարյանը նկատում է, որ վեպում Մահարին խճճվել է երկու տասնյակի հասնող երկարաշունչ երազների, սեքսուալ տեսարանների նկարագրության մեջ: Բոլոր երազները վեպում խորհրդանշական արժեք ունեն և, հիրավի, վկայություն են Մահարու գրողական հզոր ցիդի: Ինչ վերաբերում է սեքսուալ տեսարաններին, ապա մեծ ծիգ գործադրեցի որևէ տարբերակում մեծան բան գտնելու, չհաջողվեց. միակ պատկերը, որ հավակնում էր այդպիսին լինելու, սա է. «Աստվածաշնչում» կարդալով հատվածներ «Երգ երգոցից»՝ Օհանես աղան զարմանում է՝ գայթակղվելով կնոջ կրծքերի նկարագրությամբ, և փորձում գայթակղությունը նյութականացնել գիշերը. «Օհանես աղան գարթնում է, շշպփում և շոյում քնած կնոջն ըստ Աստվածաշնչի» (էջ 518): Վեպի բազմաթիվ էջերում Մահարին շեշտում է, որ Վանում պահպանվում են ավանդական բարոյական արժեքները, որ ավանդապաշտ վանեցին մինչև իր կյանքի վերջը իր կնոջից բացի ուրիշ կին չի տեսնում, վանեցի տղան ու աղջիկը համբուրվել կարող են միայն «բալնսի ծակից»: Ջարմանալի է, որ բարոյականության պաշտպան և սեքսի թշնամի հողովածագիրը և բոլոր նրանք, ովքեր համագգային նկարագրի բարոյական անկում էին տեսնում Արամի, Օհանես աղայի գործողություններում, ժամանակին գրիչ չեն վերցրել մեր ազգային նկարագիրն իսկապես խաթարող այն պատկերների դեմ, որոնցով Չարենցը անմահացրել է իր «Երկիր Նաիրիի» հերոսներին. «Համո Համբարձումովիչը կարծես զգաց, հասկացավ կարծես Մագութի Համոն քստմենլի մի բան ուղեղում, ուղեղի եղջյուրների վրա, երեքաց անհանգիստ երկիրը Նաիրի: Համո Համբարձումովիչը զգույշ, ինչպես

գողը, մոտեցավ Անգինա Բարսեղովնայի մեջքարանին: Կռացավ, բանալիի ծակից ներս նայեց Անգինա Բարսեղովնայի մեջքարանը, Մազուբի Համոն օրորվեց, ուղեղի եղջյուրների վրա թայտաց ամհամգիստ երկիրը Նաիրի... Օրորվեց, թայտաց անհամգիստ Նաիրի երկիրը, ցատկելով ուղեղի եղջյուրների վրայից, ցատկելով ուղեղից մտեց Համո Համբարձումովիչի ականջներից բուսած պոզերի վրա: Եվ այդ տարօրինակ-երկար, հոր ականջներից ընտանեբար բուսած պոզերի արանքից Մազուբի Համոյին գաղտագողի մոտեցած, նրա ետևը շնչասպառ կռացած Սևաշյա Պրիմադոնման տեսավ... մազերը, կռակը և սալիտակ մստուկը քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի), որին նկարչական մի շքեղ կոնտրաստ կազմելով, քնքուշ փաթաթվել էին պղնձագույն սրունքները Անգինա Բարսեղովնայի՝ իր Սևաշյա Պրիմադոնմայի մոր՝ Համո Համբարձումովիչի անգուզական կողակցի...»²¹:

Տեսարանը ոչ միայն սեքսուալ է, այլև համեմատության եզր չունի «Այրվող այգեստանների» որևէ զգացմունքային տեսարանի հետ. Արամի կամ Օհանես աղայի սեռաբանական ձգտումները սահմանափակվում են ակնարկներով կամ սիրագեղ հայացքներով: Ընդհանրապես պետք է նկատել, որ Ե. Չարենցի «Երկիր Նաիրի»-ի հերոսները շատ ավելի կարող էին մեր ազգային արժանապատվությունը վիրավորել, եթե միայն, չընկալելով երկի գեղագիտությունն ու գաղափարաբանությունը, կեռո՞ծ արժեքների պաշտամունքով տարվեին: Մինչդեռ Մահարին գլխավոր հերոս դարձրել է Օհանես աղային և ոչ Արամին կամ Արմենակ Եկարյանին՝ դրանով շեշտելով իր երկի ոչ քաղաքական-կուսակցական ուղղվածությունը: Եվ իր նպատակի իրագործմանը ծառայեցրել է կերպարների այն հարուստ պատկերասրահը, ուր բոլոր սեռերի, տարիքի, սոցիալական դիրքի, կուսակցական պատկանելության հերոսների խնդիրն է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի Վանի լիարժեք, իրական, հարուստ կյանքի ցուցադրումը և պահպանումը: Ահա նրանք՝ Սրբուհի հանըմ և Միհրանի մայր՝ հայ կնոջ և մոր անգուզական կերպարներ, Կանդոյան Հակոբ (սա Մահարու գյուտն է), Գևորգ՝ ամծնական և կուսակցական կյանքում չկայացած մտավորական, որն իրեն մաքրագործում է՝ հայրենիքին նվիրաբերվելով, Կարապետ Աճեմ-խաչոյան, Համբարձում Երամյան, Փանոս Թերլեմեզյան և Կոմիտաս, խրիմյան Հայրիկ, Արամ Փաշա, Վռամյան, Իշխան և դեռ անվերջ կարելի է թվարկել, հերոսներ՝ հորինված և իրական, առանց որոնց չէր ամբողջանա Վանի կերպարը:

Երրորդ հրատարակության «Երկու խոսք» առաջաբանում գրականագետ Մարկ Նշանյանը գրում է. «Մահարին իր ձեռքով կամ զրաքննիչներուն թելադրանքով իր վեպը համակարգայնորեն դատարկած է իր իմաստեն և իր իսկ ձեռքով կատարյալ կործանման ենթարկած է 40 տարվան աշխատանք մը»: Ընդունելով գրականագետի այն տեսակետը, որ վեպի հետ կատարվածը գրական աղետ էր, այնուամենայնիվ ծայրահեղ եմ համարում այն կարծիքը, որ երրորդ տարբերակով վեպը արժեզրկվեց կամ, ինչպես Գր. Աճեմյանն է պնդում, լավագույնից վերածվեց լավի:

Մահարին փոփոխեց վեպի I տարբերակը, ընդարձակեց այն, որոշ կերպարներ ստացան հոգեբանական մոր լուծումներ (Արամ և Գևորգ), որոշ արտահայտություններ կործատվեցին կամ փոխվեցին, ավելացան մոր ասքեր, և մոր տարբերա-

կը պահպանեց բոլոր այն հարցադրումները, հայ ժողովրդի պատմական ճանապարհի բոլոր կնճռոտ խնդիրները, որոնք առաջադրվել էին առաջին տարբերակում. ոչ առաջին տարբերակն էր «հակապատմական», «հակա-հերոսական» և ոչ երկրորդը «պատմական», «հերոսական»: Մահարին իրագործեց իր առջև դրված գաղափարագեղագիտական խնդիրը, այն է՝ «ընթերցողին դարձնել վանեցի, ուր էլ որ մա ծնված լիներ, այնպես, որ մա ոչ միայն տեսներ, այլև զգար Վանը»: Երկրորդ տարբերակի ծնունդը որքան էլ ցավագին ընթացք ունեցավ, այնուամենայնիվ չխաթարեց գրողի գերագույն նպատակը. վեպը դարձավ կառուցվածքով ավելի ամբողջական և գեղարվեստորեն լիարյուն ստեղծագործություն՝ ապահովելով իր մնայուն տեղը մեր նորագույն գրականության մեջ, որի կողքին 20-րդ դարի երկրորդ կեսի հայոց վեպի պատմության մեջ քիչ բան ունենք դնելու:

Գրողը փրկեց հոգևոր Վանը և պահ տվեց սերունդների հիշողությանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ս. Աղաբաբյան, Հայ սովետական գրականության պատմություն, հ. I, Երևան, 1986, էջ 548:
2. Գարուն, 1967, հ. 2, էջ 261:
3. Գ. Մահարի, Այրվող այգեստաններ, Երևան, 1966, էջ 5: Նշված վեպից հղումները կտանք տեքստում՝ նշելով տարբերակը և էջը:
4. Գարուն, 1967, հ. 2, էջ 259:
5. Ս. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890թթ., Երևան, 2002, էջ 206:
6. Շահան Շահնուր, Երկեր երկու գրքով, Գիրք երկրորդ, Երևան, 1985, էջ 53:
7. Ս. Մխիթարյան, Գրողը և պատմական ճշմարտությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, 1967, հ. 10, էջ 109:
8. Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակներ, հ. Ե, Թեհրան, 1982, էջ 216:
9. Նույն տեղը, էջ 215:
10. Նույն տեղը, էջ 216:
11. Նույն տեղը, էջ 218:
12. Նույն տեղը, էջ 219:
13. Նույն տեղը, էջ 230:
14. Նույն տեղը, էջ 227:
15. Արմենակ Եկարյան, Գահիրե, 1947:
16. Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակներ, հ. Ե, Թեհրան, 1982, էջ 227:
17. Դրոշակ, թիվ 2, էջ 36:
18. Ս. Մխիթարյան, Գրողը և պատմական ճշմարտությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան 1967, հ. 10, էջ 210:
19. Տե՛ս Վան-Վասպուրականի հերոսամարտը, Երևան, 1990:
20. Աշ. Հարությունյան, Կովկասյան ռազմաճակատի գործողությունները և Վանի ինքնապաշտպանությունը 1915 թվականին, Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 1967, հ. 10, էջ 115:
21. Շղ. Չարենց, Երկերի ժողովածու, հ. IV, էջ 138: